



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է

ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից

27 10 2017 թ., արձ. թիվ 2

Վավերացնում եմ

Ռեկտոր Ա. Թարվերոյան

30 10 2017 թ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ
ՄՐՑՈՒՅԹԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2017

Նշանակություն և կիրառման ոլորտ.

Սույն ընթացակարգը սահմանում է ՀԱԱՀ-ում միջազգային փոխանակման ծրագրերի շրջանակներում ուսանողների (բակալավորներ, մագիստրանտներ), ասպիրանտների/հայցորդների և աշխատակիցների (պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմ) ընտրության մրցույթների կազմակերպման և անցկացման կարգը: Փոխանակումն իրականացվում է փոխանակման ծրագրերով համագործակցող կամ երկկողմանի պայմանագրեր ունեցող բարձրագույն ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ բուհերի) հետ:

Փաստաթղթային հենք.

- ՀԱԱՀ ռազմավարական ծրագիր:
- Արտաքին կապերի դեպարտամենտի կանոնադրություն:
- Արտաքին կապերի և միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն, ընթացակարգեր:
- Համալսարանի գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման քաղաքականություն:
- «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության մասին» ՀՀ կառավարության N°1240 որոշում:
- ERASMUS+ հիմնական գործողություն 1 «Միջազգային կրեդիտային շարժունություն» ծրագրի և հիմնական գործողություն 2 ծրագրի ուղեցույց:

Մեկնող ուսանողների/աշխատակիցների համար մրցույթ հայտարարելու կարգը.

1. Համապատասխան պայմանագրի և փոխանակման ծրագրի առկայության դեպքում ՀԱԱՀ արտաքին կապերի դեպարտամենտը ծրագրի սկզբից առնվազն 1.5 ամիս առաջ հայտարարում է մրցույթ (խիստ հրատապ դեպքերում այդ ժամկետը կարող է կրճատվել):
2. Հայտարարությունը պետք է պարունակի.
 - ա) Համագործակցող բուհի անվանումը և համապատասխան տեղեկատվություն (կայք, պաշտոնական էջ սոցիալական ցանցերում և այլն):
 - բ) Փոխանակման ծրագրի անվանումը, տևողությունը, առկա տեղերի քանակը, համապատասխանող կուրսերը, մասնագիտությունները/ուղղությունները, ծրագրի սկիզբը և ավարտը, ֆինանսավորման եղանակը և չափը:

գ) Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

դ) Դիմելու վերջնաժամկետը և կարգը:

ե) Ծրագրի համակարգողի կոնտակտային տվյալները:

3. Հայտարարությունը տեղադրվում է ՀԱԱՀ պաշտոնական կայքում, ՀԱԱՀ և Արտաքին կապերի դեպարտամենտի սոցիալական ցանցերի պաշտոնական էջերում, հնարավորության դեպքում նաև՝ տարածվում է էլեկտրոնային փոստի հասցեների բազայով և այլ տեղեկատվության տարածման միջոցներով:

Մրցույթին մասնակցելու կարգը.

1. Ուսանողը/աշխատակիցը պետք է ներկայացնի հայտարարությունում նշված պահանջներին համապատասխանող փաստաթղթերը:
2. Անհրաժեշտ փաստաթղթերի հանձնումից հետո և դրանց համապատասխանության դեպքում ծրագրի համակարգողի կողմից բոլոր մասնակիցները ստանում են ծանուցում մրցույթի անցկացման ձևի և ժամկետի վերաբերյալ:
3. Անհրաժեշտության դեպքում մասնակիցները պարտավոր են նշանակված օրը ներկայանալ առցանց կամ բանավոր հարցազրույցի/մրցույթի:
4. Մրցույթին կարող են մասնակցել առաջին կուրսը հաջողությամբ ավարտած ուսանողները, ինչպես նաև այն ուսանողները, որոնց ենթադրյալ մեկնումը արտերկիր չի համընկնում նրանց ուսումնառության վերջին կիսամյակին: Բուհի որոշմամբ վերջին կիսամյակում իրականացվող շարժունության կթույլատրվեն միայն այն ուսանողները, որոնք դիմում են կարճաժամկետ ծրագրի և մեկնումը չի խոչընդոտում պետական քննությունների/դիպլոմային աշխատանքների կամ մագիստրոսական աշխատանքի պաշտպանությանը, իսկ առարկաների տարբերությունը թույլ է տալիս շարունակել ուսումը՝ առանց ընդհատման:

Մրցույթի անցկացնելու կարգը.

1. Գործընկեր ընդունող բուհերի միջև կնքված և/կամ ձեռք բերված համաձայնության հիման վրա մրցույթը կարող է անցկացվել հետևյալ ձևերով.

ա) Արտաքին կապերի դեպարտամենտն անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթները ներկայացնում է ընդունող բուհում տվյալ ծրագրի համար պատասխանատու ստորաբաժանում և նրանց կողմից անցկացված մրցույթի հիման վրա ստանում

ընտրված թեկնածուների վերջնական արդյունքները: Այդ դեպքում մրցույթի ձևաչափը որոշում է ընդունող համալսարանը:

բ) Անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա Արտաքին կապերի դեպարտամենտի միջնորդությամբ ՀԱԱՀ-ում ձևավորվում է Մրցութային հանձնաժողով, որը կատարում է նախնական ընտրություն: Դրա արդյունքներն ուղարկվում է ընդունող բուհում տվյալ ծրագրի պատասխանատու ստորաբաժանում և ստանում վերջնական արդյունքները:

դ) Արտաքին կապերի դեպարտամենտի միջնորդությամբ ՀԱԱՀ-ում ձևավորվում է Մրցութային հանձնաժողով, որն անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթների և բանավոր հարցազրույցի հիման վրա կատարում է վերջնական ընտրություն: Ընտրության արդյունքներն ուղարկվում են ընդունող համալսարանի պատասխանատու ստորաբաժանում, որն էլ հաստատում է վերջնական արդյունքները:

2. Մրցույթների որոշ եղանակների համար անհրաժեշտ հանձնաժողովի կազմում ընդգրկվում են.

ա) ՀԱԱՀ ուսումնական գծով պրոռեկտորը

բ) ՀԱԱՀ Արտաքին կապերի դեպարտամենտի պետը

գ) ՀԱԱՀ Արտաքին կապերի դեպարտամենտում տվյալ ծրագրի համակարգողը

դ) օտար լեզվի մասնագետ

ե) անհրաժեշտության դեպքում կարող են ընդգրկվել նաև 1-2 այլ ներկայացուցիչներ:

3. Հանձնաժողովի անդամները պետք է.

ա) ստուգեն և գնահատեն ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը,

բ) տան համապատասխան եզրակացություն,

գ) անհրաժեշտության դեպքում անցկացնեն բանավոր հարցազրույց՝ գնահատելով մասնակցի հմտությունները, մոտիվացիան և այլն:

դ) ներկայացնեն վերջնական կամ նախնական ընտրության արդյունքները:

4. Բանավոր հարցազրույցի անհրաժեշտության բացակայության դեպքում ՀԱԱՀ-ում Արտաքին կապերի դեպարտամենտի միջնորդությամբ կազմված գնահատման թերթիկներով կատարվում է մասնակիցների ռեյտինգային միավորների բաշխում, որից

հետո ամենաբարձր միավորներ ստացված մասնակիցը/մասնակիցները ներկայացվում են ընդունող համալսարան՝ որպես ծրագրի մասնակից/մասնակիցներ:

5. Այլ հավասար պայմանների դեպքում մրցույթում առավելություն է տրվում այն ուսանողին կամ դասախոսին, որը մինչ այդ կամ չի մասնակցել փոխանակման ծրագրերին, կամ ավելի վաղ է մասնակցել:

6. Մրցույթին իրավուն ունեն մասնակցելու այն ուսանողները, որոնք տվյալ պահին նմանատիպ այլ փոխանակային ծրագրի մասնակից չեն:

Մրցույթի արդյունքների հրապարակումը և բողոքարկման կարգը.

Մրցույթի վերջնական արդյունքները ստանալուց հետո ծրագրի համակարգողը ծանուցում է բոլոր մասնակիցներին, որտեղ նշվում են հաղթողների անունները, նրանց ներկայանալու օրը և ժամը, հետագա գործողությունները:

Մրցույթի արդյունքների հրապարակումից հետո 2 օրվա ընթացքում դիմորդները կարող են բողոքարկել արդյունքները՝ ներկայացնելով համապատասխան դիմում Արտաքին կապերի դեպարտամենտի պետին: Ելնելով մրցույթի տեսակից, պատասխանատու կողմը պարտավոր է 2 օրվա ընթացքում բողոքարկմանը տալ գրավոր պատասխան:

Եռակողմ պայմանագրի կնքում.

Մեկնելուց առաջ ուսանողները կնքում են եռակողմ պայմանագիր, որի ձևաչափը որոշում է ՀԱԱՀ-ն: Այն կնքվում է ՀԱԱՀ ռեկտորի, մեկնող ուսանողի և իր ծնողներից/խնամակալներից մեկի կողմից:

Հաշվետվություն ներկայացնելու կարգը.

Այցի ավարտից հետո շարժունության մասնակիցը պարտավորվում է ՀԱԱՀ Արտաքին կապերի դեպարտամենտ ներկայացնել սահմանված ձևաչափով գրավոր հաշվետվություն, ինչպես նաև ստացված արդյունքների մասին զեկուցմամբ հանդես գալ ՀԱԱՀ շահակիցների համար:

Ժամանող ուսանողների/աշխատակիցների մրցույթի անցկացման կարգը.

1. Ժամանող ուսանողների/աշխատակիցների համար մրցույթը կազմակերպվում և անցկացվում է գործընկեր ուղարկող բուհի կողմից՝ համաձայն ներքին կանոնակարգի:

2. Համատեղ մրցույթների անցկացման դեպքում առցանց հարցազրույցին մասնակցում են ՀԱԱՀ Արտաքին կապերի դեպարտամենտի պետը, ծրագրի համակարգողը, անհրաժեշտության դեպքում նաև՝ այլ ներկայացուցիչ:
3. ՀԱԱՀ Արտաքին կապերի դեպարտամենտի ծրագրի համակարգողը պետք է պատշաճ աջակցություն ցուցաբերի ժամանող ուսանողներին/աշխատակիցներին, կազմակերպի ուսումնառության/այցելության ողջ ընթացքը, ուսանողների համար ապահովի համապատասխան դասընթացների կազմակերպումը, անցկացումը և ուսանողի մասնակցությունը, իսկ ծրագրի ավարտին պետք է տրամադրի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:
4. Ժամանող ուսանողները/աշխատակիցները ուսումնառության/այցելության ավարտին պետք է ՀԱԱՀ Արտաքին կապերի դեպարտամենտ ներկայացնեն հաշվետվություն: